ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

25.04.2023 թվականին կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/27-6 գնման պայմանագրի

ք. Երևան «22» 05 2023թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանի, ով գործում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս. Գասպարյանի, ով գործում է «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.04.2023թ. կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/27-6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը և նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման համար հատկացված 2663412.00 (երկու միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր տասներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 3-ով Վճարման ժամանակացույցը խմբագրել և հաստատել նոր շարադասությամբ՝ ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 | ՀՀ, Դավիթ Բեկ 134/4 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 2050022319471001 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 00450303 |
| գլխավոր տնօրենի ժ/պ ____ Բ. Սեդրակյան | տնօրեն ____ Ս. Գասպարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«25» ապրիլի 2023թ. կնքված*
*ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/27-6 ծածկագրով պայմանագրի*
*«22» 05 2023թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 10 | 44111413/502 | Յուղաներկ | - | - | - | - | 2640000 | 2640000 | 2640000 | 2640000 | 2640000 | 2640000 | 2640000 | 2640000 | 2640000 |
| 13 | 44111421/502 | Ներկանյութ (գուաշ) | - | - | - | - | 23412 | 23412 | 23412 | 23412 | 23412 | 23412 | 23412 | 23412 | 23412 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

գլխավոր տնօրենի ժ/պ __________ Բ. Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, Դավիթ Բեկ 134/4
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022319471001
ՀՎՀՀ 00450303

տնօրեն __________ Ս. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ